ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի՝ Արաբական Միացյալ Էմիրություններ (Դուբայ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Գնել Սանոսյան:

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Արաբական Միացյալ Էմիրություններ (Դուբայ), 2019 թվականի հոկտեմբերի 13-16ը:

Հրավիրող կողմը՝ Դուբայի սպորտի խորհուրդ (DSC):

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Դուբայի արհեստական բանականությունը և սպորտի» թեմայով համաժողով-ցուցահանդեսին:

Քննարկված թեմաները՝ Համաժողով-ցուցահանդեսի ընթացքում քննարկվել են բարձր տեխնոլոգիաների և սպորտի ոլորտներին առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը 2019թ. հոկտեմբերի 13-ից 16-ը Արաբական Միացյալ Էմիրություններում (Դուբայ) մասնակցել է «Դուբայի արհեստական բանականությունը և սպորտի» թեմայով համաժողով-ցուցահանդեսին:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը «Դուբայի արհեստական բանականությունը և սպորտի» թեմայով համաժողով-ցուցահանդեսի ընթացքում կայացել են մի շարք հանդիպումներ: Համաժողով-ցուցահանդեսի ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզպետը անդրադարձել է մարզում բարձր տեխնոլոգիաների և սպորտի ոլորտում արձանագրված հաջողություններին, նշված ոլորտների զարգացման ուղղությամբ մարզի ղեկավարության ձեռնարկած քայլերին, ինչպես նաև առկա խնդիրներին:

Դուբայ կատարած այցի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը հանդիպել է «Ռոյալ Ֆռոնտ» ՍՊԸ ղեկավարության հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի և «Ռոյալ Ֆռոնտ» ՍՊԸ միջև համագործակցության վերաբերյալ 2019թ. փետրվարի 11-ին ստորագրված արձանագրությամբ նախատեսված սպորտի, զբոսաշրջության,

այլընտրանքային էներգետիկայի, գյուղատնտեսության և մի շարք այլ ոլորտներում փոխգործակցությանն առնչվող հարցեր: Նշված հանդիպման ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզպետը «Ռոյալ Ֆռոնտ» ՍՊԸ ղեկավարության հետ քննարկել է նաև առկա համագործակցության հետագա խորացմանը և ամրապնդմանը առնչվող հարցեր:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը «Ռոյալ Ֆռոնտ» ՍՊԸ ղեկավարության միջնորդությամբ հանդիպումներ է ունեցել նաև «Ռոյալ Ֆռոնտ» ՍՊԸ գործընկեր, ինչպես նաև միջազգային հեղինակավոր ընկերությունների ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումների ընթացքում քննարկվել են վերջիններիս կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզ այցելելու, ինչպես նաև հետագայում ներդրումներ կատարելու հնարավորությանն առնչվող հարցեր:

Recoverable Signature

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՀՀ Գեղարքունիք մարզպետ Signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գնել Սանոսյան

21.10.2019թ.

DEPARTURE: YEREVAN, AM (ZVARTNOTS INTL) 05 NOV 04:55
ARRIVAL: MOSCOW, RU (SHEREMETYEVO), TERMINAL D 05 NOV 07:05
DEPARTURE: MOSCOW, RU (SHEREMETYEVO), TERMINAL D 05 NOV 08:45
ARRIVAL: PARIS, FR (CHARLES DE GAULLE), TERMINAL 2C - 05 NOV 10:50
DEPARTURE: PARIS, FR (CHARLES DE GAULLE), TERMINAL 2F - 05 NOV 12:20
AEROGARE 2 TERMINAL F
ARRIVAL: LYON, FR (SAINT EXUPERY), TERMINAL 2 05 NOV 13:30

Նոյեմբերի 10

DEPARTURE: LYON, FR (SAINT EXUPERY), TERMINAL 2 10 NOV 14:15
ARRIVAL: PARIS, FR (CHARLES DE GAULLE), TERMINAL 2F - 10 NOV 15:25
DEPARTURE: PARIS, FR (CHARLES DE GAULLE), TERMINAL 2C - 10 NOV 17:50
AEROGARE 2 TERMINAL C
ARRIVAL: MOSCOW, RU (SHEREMETYEVO), TERMINAL D 10 NOV 23:30
DEPARTURE: MOSCOW, RU (SHEREMETYEVO), TERMINAL D 11 NOV 01:55
ARRIVAL: YEREVAN, AM (ZVARTNOTS INTL) 11 NOV 05:55